# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 հունիսի 2018թ.

Երևան քաղաքում Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղը (այսուհետ՝ Մասնաճուղ) ի դեմս գործադիր տնօրենի ժ.պ.՝ Սիմոն Սնգրյանի, ով գործում 14.02.2018 թ-ին տրված թիվ 72-18/010-50 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Կազմակերպություն/, ի դեմս Անձնակազմի կառավարման վարչության պետ Շուշան Առաքելյանի, միասին նաև՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Մասնաճուղը պարտավորվում է այն ուսանողներին /այսուհետ՝ Ուսանողներ/, ովքեր հայտնում են իրենց ցանկությունը, ուղարկել Կազմակերպություն ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկան /այսուհետ՝ Պրակտիկա/ անցկացնելու համար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Մասնաճուղի կողմից տրված ուղեգրի/այսուհետ՝ Ուղեգիր/ և Պայմանագրով նախատեսված հարցազրույցի դրական արդյունքների հիման վրա Ուսանողներին ընդունել Պրակտիկայի և կազմակերպել Պրակտիկայի անցկացում:

1.2. Ուսանողներին պրակտիկայի ընդունելու համար Կազմակերպության կողմից անցկացվում է հարցազրույց:

### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.1.1. Անցկացնել Մասնաճուղի ուսանողների Պրակտիկան՝ Ուղեգրում նշված ժամկետներում:

2.1.2 Կազմակերպության կողմից Պրակտիկայի ղեկավարման համար նշանակել համապատասխան որակավորմամբ մասնագետ՝ Պրակտիկայի անցկացման ստորաբաժանման ղեկավարին:

# ДОГОВОР

## ОБ ОРГАНИЗАЦИИ УЧЕБНОЙ, ПРОИЗВОДСТВЕННОЙ И ПРЕДДИПЛОМНОЙ ПРАКТИКИ

г.Ереван 06 июня 2018г.

Филиал Московского государственного университета имени М.В. Ломоносова в г. Ереване (в дальнейшем Филиал), в лице исполняющего обязанности исполнительного директора Симона Снгряна, действующего на основании доверенности 72-18/010-50, от 14.02.2018 г. с одной стороны и ЗАО "Банк ВТБ (Армения)" (в дальнейшем Организация) в лице Начальника Управления персонала Шушан Аракелян, вместе также Стороны, заключили настоящий договор (в дальнейшем Договор) о следующем:

### 1. Предмет договора

1.1. Филиал обязуется направлять тех студентов (в дальнейшем Студенты), которые выражают свое согласие в Организацию для проведения учебной, производственной и преддипломной практики (в дальнейшем Практика), а Организация обязуется принимать Студентов и организовать проведение их Практики на основании выданного Филиалом направления (в дальнейшем Направление) и положительных результатов собеседования, предусмотренного по Договору.

1.2. Для приема Студентов на Практику Организацией проводится собеседование.

### 2. Права и обязанности Сторон

**2.1. Организация обязуется:**

2.1.1. Проводить Практику Студентов Филиала в указанные в Направлении сроки.

2.1.2. Назначить со стороны Организации руководителем Практики специалиста соответствующей квалификации – руководителя подразделения, где проводится Практика Студента.

2.1.3 Տվյալ ստորաբաժանման ղեկավարի հայեցողությամբ Ուսանողներին հնարավորություն տալ ծանոթանալու և օգտվելու Կազմակերպության փաստաթղթերից, ինֆորմացիայի այլ անհրաժեշտ աղբյուրներից՝ պայմանով, եթե նրանք ստորագրել են Կազմակերպության Բանկային և առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանման պարտավորագիրը:

2.1.3. По усмотрению руководителя данного подразделения, предоставить возможность Студентам ознакомиться и пользоваться документами Организации, другими необходимыми источниками информации, с условием, если они подписали обязательство по сохранению сведений, составляющих банковскую и коммерческую тайны.

2.1.4 Ուսանողներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի և Կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, ապահովելով Պրակտիկայի անվտանգ պայմաններ:

2.1.4. Ознакомить Студентов с правилами техники безопасности и внутренней дисциплины Организации, обеспечив безопасные условия Практики.

2.1.5. Ապահովել Ուսանողների հաճախումների հսկողությունը և գրանցումը:

2.1.5. Обеспечить контроль и регистрацию посещений Студентов на Практику.

2.1.6. Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր Ուսանողին տալ բնութագիր:

2.1.6. Предоставить каждому Студенту характеристику после завершения Практики.

2.2. Մասնաճյուղը պարտավորվում է՝

**2.2. Филиал обязуется:**

2.2.1. Պրակտիկայի գործընթացի կազմակերպման համար իր մոտ նշանակել համապատասխան որակավորում ունեցող մասնագետի՝ որպես Պրակտիկայի ղեկավար:

2.2.1. Назначить в Филиале специалиста соответствующей квалификации руководителем Практики для организации процесса Практики.

2.2.2. Պրակտիկայի թեկնածու Ուսանողների ցուցակը ներկայացնել Կազմակերպությանը՝ Պրակտիկայի սկզբի ամսաթվից մեկ ամիս առաջ:

2.2.2. Предоставлять Организации список Студентов не позже, чем за месяц до начала Практики.

2.2.3. Ապահովել Մասնաճյուղի Պրակտիկայի ղեկավարի կողմից Պրակտիկայի անցկացման համաձայնեցումը Կազմակերպության Պրակտիկայի ղեկավարի հետ:

2.2.3. Обеспечить согласование проведения Практики со стороны руководителя Практики Филиала с руководителем Практики Организации.

2.2.4. Մինչ Պրակտիկան սկսելը ծանոթացնել Ուսանողներին Պրակտիկայի անցկացման կարգին:

2.2.4. Ознакомить Студентов с правилами проведения Практики до начала Практики.

2.2.5. Ապահովել Ուսանողների հաճախումները և պրակտիկայի վայրում նրանց ներկայությունը՝ ըստ սահմանված կարգի:

2.2.5. Обеспечить посещение Студентов и их присутствие на месте Практики согласно установленному порядку.

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի՝

**2.3. Организация имеет право:**

2.3.1. Մասնաճյուղին տրամադրել Ուսանողների Պրակտիկայի տեղեր՝ իր մոտ առկա հնարավորությունների շրջանակներում:

2.3.1 Выделять места для проведения Практики Студентов Филиала в рамках имеющихся возможностей.

2.3.2. Ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5 /հինգ/ օր

2.3.2 Расторгнуть Договор в любое время,

առաջ ծանուցելով Մասնաճյուղին,

2.3.3. Ցանկացած ժամանակ հրաժարվել առանձին Ուսանողի Պրակտիկան կազմակերպելուց, եթե վերջինս.

2.3.3.1. Ընդունելության ժամանակ անցկացվող հարցազրույցի արդյունքները բացասական են,

2.3.3.2. Խախտում է Կազմակերպության ներքին կարգապահության, անվտանգության և/կամ վարվելաձևի սկզբունքները,

2.3.3.3. Հրապարակել է կամ այլ կերպ երրորդ անձանց հասու է դարձրել Կազմակերպության գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կամ ստեղծել է նման հրապարակման վտանգ,

2.3.3.4. Վնաս է պատճառում Կազմակերպության գույքին:

известив об этом Колледж за 5 (пять) дней.

2.3.3 Отказаться в любое время от организации Практики отдельного Студента, если последний:

2.3.3.1. получил отрицательные результаты по итогам собеседования,

2.3.3.2. нарушает правила внутренней дисциплины и безопасности, а также принципы этики Организации,

2.3.3.3. Разглашал или иными способами сделал доступными третьим лицам сведения Организации, являющиеся тайной, или создал угрозу такого разглашения,

2.3.3.4. Наносит ущерб имуществу Организации.

## 3.Կողմերի պատասխանատվությունը

3.1. Պայմանգրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Կողմերի միջև ծագած բոլոր տարաձայնությունները՝ կապված Պայմանագրի հետ լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

3.3. Կողմերի միջև ծագած բոլոր տարաձայնությունները բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում դրանք ենթակա են լուծման դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

## 3. Ответственность Сторон

3.1. Стороны несут ответственность в соответствии с законодательством РА порядком в случае неисполнения или ненадлежащего исполнения обязанностей, предусмотренных Договором.

3.2. Все разногласия, возникающие между Сторонами в связи с Договором, разрешаются посредством переговоров между Сторонами.

3.3. В случае невозможности разрешения всех разногласий путем переговоров, последние подлежат разрешению в судебном порядке, в соответствии с законодательством РА.

## 4. Այլ դրույթներ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Եթե կողմերից որևէ մեկը չի առարկում, ապա Պայմանագիրը երկարաձգվում է ևս 1 (մեկ) տարով:

4.2. Պայմանագրի բոլոր փոփոխությունները

## 4. Прочие положения

4.1 Договор вступает в силу после подписания последнего обеими Сторонами и действует со сроком 1(один) год. Если ни одна из сторон не возражает, то Договор считается пролонгированным еще на 1 (один) год.

4.2. Все изменения Договора и/или дополнения

և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

осуществляются посредством составления подписанного обеими сторонами письменного документа.

4.2. Պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզվով, 2 /երկու/ հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Հայերեն և ռուսերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

4.3.Договор составлен на армянском и русском языках, в двух экземплярах, имеющих равную юридическую силу. Каждой Стороне предоставляется один экземпляр Договора. В случае несоответствия между армянской и русской версиями Договора преобладает армянская версия.

**5. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները**

**5. Юридические адреса и подписи Сторон**

Մասնաճյուղ

«Երևան քաղաքում Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական Համալսարանի մասնաճյուղ »
ՀՀ, ք.Երևան, Այգեստան փ., 8 տ.
Հեռ. (+374 11) 900110
ՀՎՀՀ 02636517
հ/հ 2050422261621001 «Ինեկոբանկ» ՓԲԸ
Էլ. փոստ: info@msu.am; po@msu.am

Գործադիր տնօրենի ժ.պ.

Ս. Սնգրյան

**ФИЛИАЛ**
Филиал Московского государственного университета имени М.В. Ломоносова в г. Ереване

РА, г.Ереван, ул.Айгестан, дом 8
Тел: (+374 11) 900110
ИНН 02636517
р/с 2050422261621001 ЗАО «Инекобанк»
Эл.почта:

И.О исполнительного директора

С.Снгрян

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

ք. Երևան 0010, Նալբանդյան փ. 46
Հեռ. (+374 10) 51 37 49
Ֆաքս (+374 10) 56 55 78

Էլ. փոստ: headoffice@vtb.am

**ОРГАНИЗАЦИЯ**
ЗАО "Банк ВТБ (Армения)"

г. Ереван 0010, ул. Налбандяна 46
Тел.: (+374 10) 51 37 49
Факс: (+374 10) 56 55 78
Эл. почта: headoffice@vtb.am

Անձնակազմի կառավարման վարչության պետ

Շ.Առաքելյան
Начальник Управления персонала

Ш.Аракелян